

Հ Ր Ա Մ Ա Ն N 161-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

«01» ԱՊՐԻԼԻ 2015 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

**ՆԱԻՐԱ ՍԵՂՐԱԿՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը հաստատելու մասին» N 436-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետի «դ» ենթակետով և 5-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2015 թվականի մարտի 27-ի N 01/13/2/1075-15 գրությունը և Նաիրա Սեղրակյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության պետի տեղակալի (ծածկագիր՝ 14-2.2-68) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Նաիրա Սեղրակյանի հետ 2015 թվականի ապրիլի 1-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

Պաշտոնակատար՝



ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ